

տուել... Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը ժողովուրդներ են ազատել... ինչ կը ներկայացնենք մենք՝ գերմանացիներս ուրիշ ժողովուրդների արածի հանդէպ, ունինք մենք որեւէ քաղաքական ակտ, որով կարողանայինք պարծենալ:

Դասախոսութեան վերջում համակրելի Բերնշտայն հրաւերում է Գերմանիային գէթ մի անդամ լաւ առիթը բաց չը թողնել և օգնութեան հասնել անարդար տեղը տանջուող թիւրքահայերին, վերջ դնելով թիւրքական գարշելի ուժիմին:

Ա. Ա.

Յ1) Մ. Տ108, Քիւրդ բեգ. Գծեր հայ-քրդական կեանքէն. ա. հասրիկ, Բարիզ, 1902, գին է 20 կոպ.։

Սհա մի փոքրիկ զիրք, զրուած բաւական անհոգ և նոյն իսկ անփոյթ ձեռքով. բայց որ, այնուամենայնիւ արժանի խորին ուշադրութեան: Դա վէպ չէ և ոչ էլ պօչմա, այլ արձանագրութիւն կեանքի առօրեայ պատահարների, մի քիչ համեմուած անձնական դատողութիւններով, որոնք սակայն չեն կարողանում բուն իրականութիւնը ինեղաթիւրել: Հեղինակը՝ մի թիւրքահայ, այս փոքրիկ զործով շօշափում է մի թէւ հին, բայց միշտ հետաքրքիր հարց, այն է՝ թէ ուր պէտք է վնասուել աղքիւրը այն մեծ չարիքի, որ ծանրանում է թիւրքաց հայերի գլխին: Ցայտնի արինալի դէպքերից շշմած շատ տափակ զըլուխներ փորձեցին բարականաւ ատութիւններ» սահմանել, անմիտ ու փութկոտ վճիններ արձակել և հրէաների պէս «Ի Խաչ հան» ոռնացին: Ողորմելի ոչնչութիւններին մի բնորոշ յատկութիւն է, պատասխանատուներ ու զոհեր վնասուել իրանց մէջ, իրանց շուրջը, երբ անկարող են աւելի հեռուն տեսնել, աւելի հզօրներին դիմադրաւել, ինչպէս խղճուկ երեխաներ, որոնք քարին դիմացելուց և ընկնելուց յետոյ, վեր են կենում և ոտքով գետինը թակում:

Դասախազի դերը երեւի շատ է գրաւիչ, որովհետեւ ամեն մի գարշելի սոլուն շտապեց զերազանցել միւսներին իր յախուռն մեղադրանքներով և զաղըելի թուլամորթները, հասան մինչեւ այն աստիճանի, որ ամենանուիրական գերեզմաններն ու անունները չը ինայեցին իրանց բերանի պիղծ փրփուրով: Ասում էին, որ թիւրքաց Հայաստանը դրախտ էր, երջանիկ երկիր, որ հայերը բազգաւոր էին այնտեղ, բայց իրանց ձեռքով

իրանց աչքերը հանցին։ Միայն կոյր աչքերի տեսած այդ «զրախութիւն» մասին շատ է գրուել, նրանոյն իսկ մանրամասը նկարագիրը արեցին նաև շատ օտարականներ, ահա այժմ էլ մի հայրենակից, մի հայ մարդ՝ պ. Շեռու, որ իր ասելով 23—24 տարի է անցկացրել այդ երկրում, գալիս է իր գրքով մեղ ցոյց տալու միայն մի անկիւնը, մի շատ փոքրիկ անկիւնը այն իրականութեան, որ իշխում էր այն «զրախութում» մեղադրանքի հիմունք ծառայող 95—96 թ. դէպքերից առաջ։

Պ. Շեռու իր նկարագրութեան համար վերցնում է Բալուի մի անկիւնը, և այնտեղ ամեն օր կատարուող փաստերից միայն մէկը, որ սակայն բոլորովին բաւական է տիսուր, սարսեցուցիչ լոյս սփուելու թիւրքաց Հայաստան կոչուող դժոխվի վրայ։

«Նայելով աւանդութիւններին և ժամանակակից ծերունիների պատմածին, ասում է հեղինակը, Բալու գաւառը ԺԹ գարի սկզբներին ունէր 253 զիւղ, որոնցից 120-ը զուտ հայաբնակ էին, մնացեալ 133 զիւղերում կը բնակէին հայ և քիւրդ խառն։ Այդ 253 զիւղերում բնակուող հայերի ընդհանուր թիւն Բալու քաղաքի հայ բնակիչների հետ 60—70 հազար էր, իսկ քըրդերինը մօտ 30 հազար... Այդ գաւառում այժմեան հայերի թիւն է ընդամենը 17—18 հազար, մինչդեռ քրդերի թիւը 70—65 հազարի կը յանգին։ Հայ աղքաբնակութեան թուի այդ խոշորէկ սահմանափակումը յատուկ չէ, ի հարկէ, միայն Բալու գաւառին։ «Ի՞նչ եղան հայերը», ահա մի ուշագրաւ հարց, ասում է պ. Շեռու, և աշխատում է իրականութիւնից վերցրած իր ճշգրիտ նկարագիրներով պատասխանել այդ հարցին։

Նա նկարագրում է մի դէպք, մէկն այն բիւրաւոր դէպքերից, որոնք այդ երկրում այնքան սովորական են զարձել, և որոնց մասին կրկնութիւնը երբէք անօգուտ չէ։ Ղամիշլուք հայ զիւղում Մէլիք-Խոր 60—70 անդամից բազկացած ընտանիքը կայ, հարուստ ու բարեկեցիկ։ Մէլիք-Խոր, ինչպէս և շատ ուրիշ հայ մէլլիքներ թիւրքաց Հայաստանում, երջանիկ ու բարեկեցիկ ենք, որովհետեւ կեանքը նրանց սովորեցրել է անծայր, անսասնական համբերութիւն։ Համնում է սակայն մի վայրկեան, երբ այդ իմաստուն համբերութիւնն էլ չի օգնում Մէլիք-Խոր ունի մի զեղեցիկ թոռ, 15 տարեկան Թուրքանտան, այս աղջկայ զեղեցկութիւնը գրաւում է քրդական Քուրմ զիւղի ցեղապետ Ալի աղայի ուշագրութիւնը, որ պահանջում է Թուրքանտան, իրան տալ կնութեան։ Սրա հակառակորդ Քար-Օր զիւղի ցեղապետ Զէյնէլ աղան լուր է ուշագրկում Մէլիք-Խորին թէ Թուր-

վանտան իրան է պատկանում և եթէ համարձակուի Ալիին տալ, նա սարսափիկի կերպով վրէժինդիր կը լինի: Այս երկու արիւնարբու գաղանների մէջ ինչ անի ոչխարացած, սրուկ հայր: Նա հանդարտ սպասում է գէպերի ճակատազրական յաշորդականութեանը: Ալին առաջինը փախցնում է Թուրքանտաշին, Զէյնէլը նրա հետ կոռի է բռնւում Փլայ աղջկայ համար, երկու քիւրդ ցեղերն ընդհարւում են, հետեանքը...

Ահա՝ «Երկու արիւնախանձ ցեղերի մի շարաթ տեւող ահուելի ճակատամարտի ընթացքում, որ տեղի ունեցաւ Մրջիւնիկ և Սագրաթ հայրանակ գիւղերի միջիւ ընկնող դաշտավայրում —քրդերի կողմէն աւարառութեան ենթարկուեցան հետեւեալ հայ գիւղերը՝ Գմբէթ, Ապարանք, Նըմրի, Նըպշի, Սղամ, Զէթ, Ղամիշլուք, Արդիխան, Մէզրէ, Մրջիւնիկ, Նոր-Շնակ և Սագրաթ... գիւղերէն մօտ 200 հոգի կոտորուեցան, որոնց մէջ և Մէլիք Խոջոն ու իր երեք որդիքը, Մարտօն ապաստանած էր իր աղջկայ մօտ՝ Ալի աղայի տանը: Մէլիքին ու գերդաստանին սրի անցնելու համար Զէյնէլ աղան յատկապէս մի խումբ էր զըրկած Ղամիշլուք: Այդ խումբը չը բաւականացաւ իրեն տուած հրամանով, խժդիւկի արարքներով քարուքանդ արին Ղամիշլուքը աւերակների տակ թաղելով տասնեակ զոհեր: Երկու սեռի պատանիներին էլ գերի տարին Քար-Օր, ուր այդ խեղճերը մնացին 1—2 շաբաթ, Զէյնէլ աղայի սպանուելէն յետոյ, Դոգըքցոց շէյսի կարգադրութեամբ գերիներին տարին Բէրիա-Հալէպ քաղաքը և լաւ զնով ծախեցին պասրացիներին».

Իսկ Թիւրք կառավարութիւնը... նա յաղթող Ալի աղային հնորհեց Բէզի տիտղոս և բազմաթիւ ընծաներ... Այս է եղել իրականութիւնն այն «գրախտի», որի անունից խօսում են ամօթալի մեղադրանքների կոյր սիրահարները: որոնք շարունակում են պնդել, թէ այդ բոլորը տանելի էր, որովհետեւ իրանք այնուեղ, այն «կարմիր դրախտում» չէին դանւում: Գուցէ նրանք, այդ ողորմելի «պօլիտիկները» իրաւունք էլ ունեն «տանելի» համարել այդ «գրախտում» ապրուստը, քանի որ այնուեղ ժողովուրդ կայ, որ ապրում է հետեւեալ կենսական փիլիսոփայութեամբ, որ մենք կ'արտադրենք բառապրառ Շւօտի գրքից:

«Զի՞ որ նրանք քիւրդ են, նրանց համար հալալ է մեր մալն էլ, մեր կնիկն էլ, մեր արիւն էլ... Միայն թէ մեր լոյս հաւատին չը դպչեն, ու մեր հայութիւնը մեզմէ չը խլեն... Մենք ժրաշան մարդիկ ենք... Մենք դարձեալ մալի և կնոջ տէր կը դառնանք... Իսկ քիւրդը էլի չունի և էլի մեզ պիտի կարօտի... Մենք հայերս որ կանք, ոչխար ենք. քրդերը՝ գայլ որ-

քան էլ ոչխարը գայլի—զազանի փայ լինի, որքան էլ նրան
մորթեսուուտես, նա չի վերջանար և օրըստօրէ կ'աճի, Մինչդեռ
գայլը տեսէք, թիւը նուազ, փորը միշտ քաղցած...» Զարմանաւ-
լի է ասկայն, որ այս իմաստուն փելիսսափայութիւնը, ինչպէս
տեսանք, չի էլ արդարացել Բալուում. ուր 70 հազար հայերի
թիւը իջել է 18 հազարի, սրանք ոչխարներն են. 30 հազար
քրդերի՝ այսինքն գայլերի թիւը, նոյն ժամանակում, բարձրա-
ցել է 65 հազարի... Թուերը շատ են պերճախօս. Ասենք այդ-
պիսի փիլիսոփայութիւնն իր կանքի առաջնորդ ընտրող ժողո-
վուրդու իրաւունք էլ չունի տրանջալ, պատմութեան օրէնքը
անողոք է և անխուսափելի:

Ա. Ա.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Գալուստ Տէր-Մկրտչեան—Գրիգոր-Մաննաճինը Ռաժիկ Միհ-
րան տոհմից, արտատպ. «Արարատ»-ից, Վաղարշապատ,
1902, թ.:
- 2) " " " — Պետրոս Սիւնեաց ևպիսկոպոս
Արտատպած «Արարատ»-ից, Վաղարշապատ, 1902 թ.:
- 3) " " " — Ստեփանոս իմաստասէր, Ար-
տատպ. «Արարատ»-ից, Վաղարշապատ, 1902 թ.:
- 4) " " " — Ղազար Փարպեցու ձեռադիրը,
Վաղարշապատ, 1902 թ.:
- 5) Բ. եպ. Գէորգեան (Ճուղուրեանց) Վաղարշապատցի. Խորե-
նացուն Խորենացով պէտք է հասկանալ, Թիֆլիս, 1902 թ.,
զինն է 1 ռ.:
- 6) Սոխակ Հայաստանի, հրասարակեց Գր. ք. Գրիգորեանց,
1 հատոր, 5 տպագրութիւն, Բագու. 1902 թ., զինն է
1 ռ. 20 կ.:
- 7) Լորդ Լիտոն, Պօմպէյի վերջին օրերը, թարգմ. անգլ. 8.
Միրզոյեան, հրատ. Գ. Գալստեանի, Թիֆլիս. 1903 թ.:
- 8) Ն. Սուվորօվ, Եկեղեցու և պետութեան յարաբերութիւննե-
րը, թարգմ. Պ. Տէր-Յարութիւնեան, Վաղարշապատ,
1902 թ., զինն է 30 կոպ.:
- 9) Բժ. վ. Արծրունի, Նորածին երեխաների հիւանդութիւննե-
րը, Թիֆլիս, 1902 թ., զինն է 5 կոպ.: